

ՄԱՐՏ 2023

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ



Երևան 2023

1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	3
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	4
1.1.1. Ջրահեռացման համակարգ	5
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում	6
1.3. Ջրահեռացման համակարգ	6
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	7
1.5. Էներգահամակարգ	8
1.6. Մեքենա-մեխանիզմներ	8
2. Առևտրային տնօրինություն	9
2.1. Բաժանորդների տվյալներ	10
2.2. Հասույթ	10
2.3. Գանձում	11
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/	12
2.5. Ջրաչափեր	13
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	14
3. Տեխնիկական տնօրինություն	15
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	16
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	17
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	19
3.4. Ջրատար համակարգի բարելավում	19
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն	23
3.6. 1-85 թեժ գիծ	24
4. Լրատվական ծառայություն	25
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	28
5.1. Փաստաթղթերի մշակում	29
5.2. Դասընթացներ/սեմինարներ	29
5.3. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	30
5.4. Համագործակցություն ՀՀ ՆԳ Նախարարության հետ	31
5.5 Անհատական պաշտպանության միջոցներ և կոլեկտիվ պաշտպանության միջոցներ	31

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում «Հարավ» ՇՏ սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական, ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես:

Վայոց ձորի մարզ

● «Եղեգնաձոր» տեղամասի աշխատակիցների կողմից շահագործումից հանվել է Գետափ գյուղի թիվ 2 ՕԿՋ-ն սնող $d=110$ մմ $L=87$ գծն պեթ խողովակաշարը և կառուցվել է նոր ջրագիծ մետաղական խողովակաշարով ($d=89$ մմ $L=87$ գծմ):



● «Վայք» տեղամաս. ք.Վայք, Շահումյան փողոցում ասֆալտապատման աշխատանքներին զուգահեռ աշխատակիցների կողմից իրականացվել են կոտրված ջրաչափական դիտահորերի փոխարինման աշխատանքներ՝ նոր պոլիմերավազային դիտահորերով (թվով 26), փոխարինվել է թվով 19 $d=15$ մմ գնդիկային փական:

Արմավիրի մարզ

● «Արմավիր» տեղամաս. Արմավիրի մարզի Նորավան համայնքի $L=610$ գծմ կենտրոնական փողոցի ասֆալտապատման աշխատանքներին զուգահեռ սեփական ուժերով ծրագրի շրջանակներում աշխատակիցների կողմից նշված փողոցի $d=100$ մմ $L=610$ գծմ վթարային վիճակում գտնվող թուջե ջրագիծը փոխարինվել է $d=100$ մմ $L=610$ գծ պեթ խողովակով: Ընդհանուր թվով 11 բնակիչ-բաժանորդների ջրաչափական դիտահորերը դուրս են բերվել բաժանորդների սեփականություն հանդիսացող տարածքներից (մեր կողմից տեղադրվել են նոր դիտահորեր), վթարային վիճակում գտնվող բոլոր մետաղական մուտքագծերը փոխարինվել են մետաղապլաստե խողովակներով, թվով 11 ջրաչափերը փոխարինվել են նոր ջրաչափերով: Ջրագծի փոխարինման արդյունքում տնտեսվել է մոտ 1 լ/վ ջուր:



Արտաշատի մարզ

● «Արտաշատ» տեղամասի աշխատակիցների կողմից Արտաշատ համայնքի Դեղձուտ բնակավայրի Ն.Ստեփանյան փողոցում վերակառուցվել են $d=58$ մմ $L=320$ գծմ պեթ ջրագծեր: Նշված փողոցի $d=58$ մմ գործող մետաղական ջրագծերը կառուցվել էին դեռ 1970-ական թվականներին, գտնվում էին խիստ քայքայված, կոռոզիայի ենթարկված վիճակում և պիտանի չէին հետագա



շահագործման համար: Շահագործումից հանվել են $d=20-50$ մմ $L=320$ գծմ վթարային վիճակում գտնվող մետաղական ջրագծեր, տեղադրվել է թվով 7 պոլիմերավազային ջրաչափական դիտահոր, թվով 6 բաշափ ($d=15$ մմ), թվով 7 փական ($d=15$ մմ): Կատարված աշխատանքների արդյունքում Դեղձուտ համայնքում բարելավվել է մատակարարվող խմելու ջրի որակը, տնտեսվել է մոտ 1լ/վրկ ջրաքանակ, կատարվել է ցանցի աշխատանքների ճիշտ կազմակերպում: Ինչպես նաև Վեդի քաղաքի Կասյան փողոցում իրականացվել են վթարային վիճակում գտնվող ջրագծի վերկառուցման աշխատանքներ՝ պեթ $d=20-160$ մմ $L=945$ գծմ խողովակներով:

1.1.1. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

● «Կենտրոն» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Ագաթանգեղոսի փողոց 7 հասցեում գտնվող $d=250$ մմ կերամիկական կոյուղագիծը տեղամասի աշխատակիցների կողմից փոխարինվել է նոր $d=250$ մմ $L=12$ գծ/մ երկշերտ ծալքավոր պեթ խողովակով:



Արարատի մարզ



● «Արտաշատ» տեղամասի աշխատակիցների կողմից, սեփական ուժերով ծրագրի շրջանակներում, վերակառուցվել է Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Մանուշյան փողոցի $d=20-50-63$ մմ $L=320$ գծմ կոյուղագիծը: Գործող $d=250$ մմ կոյուղատար համակարգը (ինչպես նաև ներտնային միացումները) կառուցվել էր 1960-ական թվականներին՝ շին.նորմերին՝ անհամապատասխան, գտնվում էր խիստ քայքայված, կոռոզիայի ենթարկված վիճակում և պիտանի չէր հետագա շահագործման համար: Կառուցվել են $d=150-200-250$ մմ, $L=12-192-240$ գծմ ծալքավոր խողովակներ, տեղադրվել է թվով 4 կոյուղու ե/բ դիտահոր, թվով 8 կոյուղու ե/բ դիտահորի ծածկեր 1,2x1,2մ, իրականացվել է $d=250$ մմ կառուցված կոյուղագծի միացում $d=1000$ մմ ե/բ կոլեկտորին:

Մարտ ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1969
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	70440
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	43390
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	13780
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	50
Շահագործումից հանված ջրագիծ	մ	1165.8
Կառուցված ջրագիծ	մ	5652.3
Կառուցված կոյուղագիծ	մ	611
Վերացված գաղտնի վթարներ	հատ	17
Փոխարինված փական	հատ	35
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	337
Մաքրված դիտահոր	հատ	960
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	18.2
<i>Վերացված վթարներ</i>	<i>Չափման միավոր</i>	<i>Քանակ</i>
Ջրամատակարարման ցանցում	հատ	1024
Ջրահեռացման ցանցում	հատ	1551
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Մարտ ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	737	1025	1010

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է մարտ ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամաչափ, մմ										Ընդամենը
	15	20	25	30	32	40	50	65	80	100	
Տեղադրված	125	1	1	0	0	1	1	0	1	0	130
Փոխարինված	371	43	15	0	10	10	8	1	4	2	464
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	135	5	0	0	3	1	5	0	3	0	152
Ընդամենը	631	49	16	0	13	12	14	1	8	2	746

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 746 ջրաչափ: Կատարված աշխատանքների 85 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մարտ ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:



Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	50	249	0
2	Քանաքեռ-Զեյթուն	0	323	6
3	Մաշտոց	0	260	12
4	Շահումյան	0	254	42
5	Շիրակ	720	462	13.5
6	Արթիկ	0	95	0
7	Ապարան	0	53	0
8	Ալավերդի	1820	26	36
9	Աշոցք	0	2	0
10	Բերդ	270	23	0
11	Իջևան	0	52	0
12	Լոռի	0	253	0
13	Նոյեմբերյան	0	20	0
14	Սյիտակ	180	24	0
15	Ստեփանավան	945	18	0
16	Թալին	0	23	0
17	Տաշիր	0	10	0

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
18	Չարենցավան	0	94	0
19	Աբովյան	0	162	0
20	Հրազդան	0	110	80
21	Կենտրոն	250	290	18
22	Հյուսիս	0	302	30
23	Էրեբունի	0	194	0
24	Հարավ	0	342	7
25	Արմավիր	0	128	3
26	Արտաշատ	0	135	216
27	Էջմիածին	0	131	8
28	Աշտարակ	2086	31	12
29	Արարատ	0	87	0
30	Մապիս	0	68	2
31	Գավառ	0	32	0
32	Սևան	0	94	0
33	Մարտունի	0	22	0
34	Վարդենիս	0	15	0
35	Ճամբարակ	0	15	0
36	Դիլիջան	0	49	10
37	Վայք	20	21	0
38	Եղեգնաձոր	0	20	0
39	Ջերմուկ	0	46	0
40	Սիսիան	0	45	0
41	Գորիս	0	45	12
42	Կապան	180	88	71,5
43	Մեղրի	900	44	0
	Ընդամենը	7421	4757	507.5

1.4. ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՅՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Գավառի կեղտաջրերի պոմպակայանում հաճախակի խափանումներ էին առաջանում: Ձևության արդյունքում պարզ դարձավ, որ ջրի մակարդակի տվիչները քայքայվել էին, որի պատճառով էլ առաջանում էին խափանումները: Արդյունքում մակարդակի տվիչները ապամոնտաժվեցին և տեղադրվեցին ներժից պատրաստված նոր տվիչներ, որի արդյունքում պոմպակայանը աշխատում է բնականոն ընթացքով:

- Ջերմուկի կեղտաջրերի մաքրման կայանի օդամուղի ռոտորի ածխե թիթեղները մաշվել էին և այդ պատճառով օդ չէր մղվում դեպի սարքավորումներ: Արդյունքում դրանք փոխարինվեցին նորով: Շարքից դուրս էին եկել նաև օդամուղներից մեկի առանցքակալները, որոնք ևս փոխարինվեցին նորով և այժմ օդամուղները աշխատում են բնականոն ընթացքով: Խախտվել էին նաև մանր ճաղավանդակի քերիչ սանրերը, որի արդյունքում ճաղավանդակները չէին մաքրվում պատշաճ ձևով: Արդյունքում դրանք կարգաբերվեցին և այժմ բոլոր սարքավորումները աշխատում են բնականոն ընթացքով:

- Սևանի N3 կեղտաջրերի պոմպակայանում շարքից դուրս էր եկել էլ. վահանակում տեղադրված եռաֆազ ավտոմատ անջատիչը, որի պատճառով խափանվել էր ամբողջ պոմպակայանի աշխատանքը: Արդյունքում ավտոմատ անջատիչը փոխարինվեց նորով: Խցանվել էին նաև հակադարձ փականները, որոնք մաքրվեցին և այժմ պոմպակայանն աշխատում է բնականոն ընթացքով:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	68,826	21.6
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	55,266	23.4
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	168,732	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	90,231	10.8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	126,918	19.8
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	18,627	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	9,623	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	9,950	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	19,700	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Թվով 385 բակային պոմպակայանում կատարվել են ուսուցնասիրություններ, որոնց արդյունքում թվով 270 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները: Ինչպես նաև իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՁ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ:

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Մարտ ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:



«Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման նպատակով մարտ ամսվա ընթացքում նորոգվել են թվով 5 մեքենայի արգելակման համակարգերը, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 4 մեքենամեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, աստաճանիփսեր, առանցքակալներ, կիսաստնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Փոխարինվել են թվով 45 մեքենա-մեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ, քսայուղեր և գտիչներ:

Թվով 2 մեքենա-մեխանիզմի անվաղողեր փոխարինվել և հավասարակշռվել են:

Թվով 3 մեքենայի վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 2 մեքենայի վրա իրականացվել են գներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Թվով 10 մեքենա-մեխանիզմի համար նորոգվել է և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ:

Հիդրավլիկ համակարգի նորոգում է իրականացվել թվով 2 մեքենա-մեխանիզմի վրա, փոխարինվել են խցուկներ, բարձր ճնշման մղիչներ, ռետինե խողովակներ:

Թվով 3 մեքենայի վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուղեր:

Թվով 3 մեքենայի մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Վերանորոգվել են թվով 4 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուղեր, կայծամուղի լարեր, ռելեններ, վառոցքի բանալիներ:

Թվով 3 ավտոմեքենայի մարտկոց փոխարինվել է նորերով:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենամեխանիզմներն աշխատում են անխափան, որը օգնում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.04.2023թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 598,505 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2023թ. մարտ ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	665,684	570,871	85,8
	Իրավաբանական անձ	31,556	27,634	87,6

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	741,113	598,726	80,8
	Իրավաբանական անձ	36,863	26,081	70,8

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 710 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գույքահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Մարտ ամսվա ընթացքում ստուգաչափվել է 5707 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 03.2023
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	2401	1699	298	4398
	Իրավաբանական անձ	883	340	86	1309
	Ընդամենը	3284	2039	384	5707

Ստուգաչափված ջրաչափ



Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ մարտ ամսին փոխարինված 5707 ջրաչափերի մոտ 42 %-ը (կամ 2423 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 344,123 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2023թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Մարտ ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,135 մլն. դրամ (95 %): Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում են բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն:

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, հաշվի առնելով որոշակի հանգամանքներ, հատկապես սահմանամերձ բնակավայրերում, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Մարտ ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 173 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 23.2 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.04.2023թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում հուլիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	10,214	2,355
Բնակիչ-բաժանորդներ	7,283	1,549
Իրավաբանական անձեր	2,931	806

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 326.8 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:

2023 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Մարզեր)



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.04.2023թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	711,124	590,781	83.08	35,876	26,499	73.86
	Առանց ջրաչափի	30,622	1,270	4.15	1,067	9	0.84

Տվյալների բազայում 01.04.2023թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	882,483	392,585	44.49	39,625	9,779	24.68

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) 6641 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 743 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճզգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2435	1995	81.9
գ.Պոռչյան	1665	1136	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	5969	1914	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել մի շարք տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 14394, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 14097, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 3363, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 4477, Միսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2375, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3470 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 5983 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	493	242,825	46,388,832

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի մարտ ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը կազմել է՝ 96.8%, ինչը 0.3 % նվազ է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 45 ՃԿՓ-ներ: Ստորև ներկայացված են կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը:




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաբանակը 2023թ-ի մարտ ամսին 2022 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 105 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսը ավելացել է 296 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում:



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 27156 կՎտ.ժ (1,8%), այն դեպքում երբ նորակառույց շենքերի 14 պոմպակայան ավելացել է «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 14 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 6569 կՎտ.ժ: Իսկ առանց այս պոմպակայանների էլ. էներգիայի ծախսի այն կլիներ 20587 կՎտ.ժ ավել:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում գույքագրվել են պ/կ-ի 118 էլ. հաշվիչներ: Փոխարինվել է «Ֆանտան խ/հ» պոմպակայանի առևտրային էլ. հաշվիչը: Ստուգվել է ընդունվող 3 նոր պոմպակայանների համապատասխանելիությունը Արգիշտի 7/10, Գ.Հովսեփյան 56/7, Գ.Հովսեփյան 56/6: Ամենօրյա կարգով ընթերցվել և հաշվետվություն է ներկայացվել ջրարտադրության խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ: Էլեկտրաէներգետիկական մեծախախ շուկայի ԿՈԻՊ (կարգավորվող ուղիղ բաղադրիչ) և ՕԱՇ (օր առաջ շուկա) բաղադրիչներում կատարվել են առևտրային գործընթացներ, որոնց արդյունքում տնտեսվել են համապատասխանաբար 7,712,908 ՀՀ դրամ և 157,005 ՀՀ դրամ: Կատարվել է էլ. էներգիայի հաշվառում, գործարքների արդյունքում ձևավորված ակտերի ստուգում, հաստատում:

● Գյումրի քաղաքում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 2484 կՎտ.ժ 9%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ



Պոմպակայանների ուսուժանասիրություն

Թվով 32 խոշոր պոմպակայանում կատարվել են ուսուժանասիրություններ, որոնց արդյունքում 21 պոմպակայանում վերացվել են հայտնաբերված թերությունները:


Թվով 385 բակային պոմպակայանում կատարվել են ուսուժանասիրություններ, որոնց արդյունքում թվով 270 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները: Ինչպես նաև իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՁ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ: Թվով 5 հասցեում հայտնաբերվել են ջրագծի վթարներ:

Ինվերտորների տեղադրում

Հաշվետու ամսում չորս հասցեներում նախկին պոմպերի ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերը փոխարինվել են ինվերտորային համակարգով.

- ▶ Քանաքեռ ՀԷԿ (Ar-48)
- ▶ Ֆաջեգործների 74ա (Er-29)
- ▶ Արգիշտի 11/4 (Ke-108)
- ▶ Ծերենց 5 (Sh-13)

Տեղադրված ընդհանուր 78 ինվերտորային համակարգով պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նվազել է 3874 կՎտ.ժ 4%:




Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

● Հաշվետու ժամանակահատվածում 41 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:


● 2023թ. մարտ ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 237 455 կՎտ/ժամ (24,98%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա




● Ջրարտադրության պոմպակայաններում (մարզեր) էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 21 442 ԿՎտ/ժամ կամ 1,18 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 214 590 ԿՎտ/ժամ կամ 5,37 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են մարտ ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Կենտրոն տեղամասի ջրագծերի ուղղում և թարմացում՝ տեղամասից բերված տվյալների հիման վրա	տեղամաս	1
Երևանի քաղաքի ՃՎՓ-ների տվյալների բազայի թարմացում, բոլորի համար ավելացվել են մուտքի ճնշումների արժեքները	քաղաք	1
Լուկաշին թաղամասի ներտնային միացումների մուտքագրում ԱՏՀ՝ շինարարական բաժնի կողմից տրամադրված տվյալների հիման վրա	թաղամաս	1
Շահումյան տեղամասի ջրաքանակների չափման կետերի վերաբերյալ տվյալների մուտքագրում ԱՏՀ	տեղամաս	1
Կոտայքի մարզի Երզնկա գյուղի ջրագծերի ուղղումներ և թարմացումներ՝ գոտիավորման բաժնի կողմից տրամադրված տվյալների հիման վրա	մարզ	1
ԱՏ համակարգ է անցկացվել, թվայնացվել, վերանայվել համայնքների ջրագծերը	համայնք	4
Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի Վեոլիա Ջուր ՓԲԸ սպասարկվող բնակավայրերի փողոցների և շենք/շինությունների թվային շերտերի թարմացում և բազավորում	մարզ	2
Իջևան քաղաքի հիդրավլիկ մոդելավորում՝ հաստատուն և ընդլայնված ժամանակահատվածների համար	քաղաք	1
Տեխնիկական պայմանների թվայնացում	տեխպայման	224
Սխեմաների թվայնացում	սխեմա	28
Երևանում շահագործումից հանված ջրագծերի երկարությունը	մ	38
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական կետերի ուղղում	կետ	1590
Երևանում կառուցված ջրագծերի երկարությունը	մ	437
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական նոր կետերի ավելացում	կետ	20
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական նոր կետերի ավելացում	կետ	1677
Երևանում կառուցված կոյուղագծերի երկարությունը	մ	90
Տեղադրված կամ փոխարինված փականներ	փական	20
ԱՏՀ-ում Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	2529
ԱՏՀ-ում Մարզային ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	9353
ԱՏՀ-ում առկա Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը	կմ	1793
ԱՏՀ-ում մարզերի կոյուղու երկարությունը	կմ	1814

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք մարտ ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը.

Արզնի 2

Ջրատարի վրա հայտնաբերվել է վթար ≈ 25 լ/վ մեծությամբ, իսկ օրեր անց կազմակերպվել է ջրատարի կանգառ, որի ընթացքում վերացվել է տվյալ վթարը:



Արին-Բերդ-Խարբերդ

Ջրատարի շրջայցի ժամանակ հայտնաբերվել է վթար ≈ 35 լ/վ մեծությամբ: Անմիջապես տեղեկացնելով շահագործման տեղամասին կատարվել են ջրատարի ճնշման նվազեցման գործողություններ, որից հետո վթարը կանխվել է:



Գետամեջ գյուղում հայտնաբերվել է ջրի արտահոսք. տվյալ հատվածում իրար զուգահեռ գտնվում են «Արզնի 2» և «Արզական-Քանաքեռ» ջրատարները: Հողային աշխատանքներից հետո պարզվել է, որ երկու ջրատարները տվյալ հատվածում վթարված են:

Կազմակերպվել է «Արզական-Քանաքեռ» ջրատարի կանգառ և տվյալ ջրատարի վրա գոյություն ունեցող վթարը վերացվել է ≈ 15 լ/վ:



Կատարվել են ջրաքանակների կարգավորման աշխատանքներ:

Գոտիավորման աշխատանքներ

Գյուղ Վահրամաբերդ

● «Շիրակ» տեղամասի աշխատակիցների կողմից աշխատանքներ են կատարվել Վահրամաբերդ գյուղը սնուցող $D=100$ մմ պողպատե ջրագծի վրա, որը գյուղի մոտ անցկացված էր Շիրակի ջրանցքի միջով և գտնվում էր քայքայված վիճակում: Որոշվեց այն բարձրացնելու եղանակով փոխարինել նոր խողովակով անցկացնելով ջրանցքի վրայով: Արդյունքում խցափակման եղանակով շահագործումից հանվել է $D=100$ մմ, $L=19$ մ պողպատե և կառուցվել է նոր $D=100$ մմ $L=12$ մ պողպատե ջրագիծ: Տնտեսվել է մոտ $0,5-1$ լ/վ ջրաքանակ:



Քաղաք Գյումրի

● «Շիրակ» տեղամասի աշխատակիցների հետ ուսումնասիրություն է կատարվել և հայտնաբերվել է վթար Անի թաղամասի 9 փող 7ա շենքը սնուցող ջրագծի վրա: Թորման աշխատանքներից հետո պարզվել է, որ այն այլևս վերականգնման ենթակա չէ, ուստի որոշվել է այն փոխարինել ներսրսկման միջոցով: Արդյունքում խցափակման եղանակով շահագործումից հանվել է $D=50$ մմ, $L=19$ մ պողպատե և ներսրսկվել նոր $D=32$ մմ, ՊԷ $L=19$ մ ջրագիծ: Տնտեսվել է մոտ $1-1,5$ լ/վ ջրաքանակ:



Գյուղ Սարագյուղ

● «Աշոցք» տեղամասի Սարագյուղ բնակավայրը սնուցող կապտածի ցամաքելու պատճառով գյուղում իրականացվելիք ջրամատակարարումը դադարել էր: ՇՏ և Տեխնիկական տնօրինության համատեղ աշխատանքի արդյունքում որոշվել է գյուղի տարածքում գոյություն ունեցած հին խորքային հորի մոտ հորատել նոր խորքային հոր և խորքային պոմպի միջոցով ջուրը մղել ՕԿՋ-ն սնուցող D-125մ պողպատե ջրագծին: Արդյունքում կառուցվել է նոր D=90մ, ՊԷ L=490մ ջրագիծ, որի շնորհիվ գյուղը ապահովվել է կանոնավոր ջրամատակարարմամբ:



Քաղաք Չարենցավան



● «Չարենցավան» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է վթար Չարենցավան քաղաքի 1ա թաղամասի 1 շենքի D = 80մ պողպատե մուտքագծի վրա: Արդյունքում տնտեսվել է Q = 1,5լ/վ ջրաքանակ:

Քաղաք Սևան

● «Սևան» տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Աբովյան 15 շենքի հարևանությամբ անցնող D=150մ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելու արդյունքում տնտեսվել է Q = 6լ/վ ջրաքանակ:



Քաղաք Աշտարակ



● «Աշտարակ» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Աշտարակի 1-ին ՕԿՋ-ն սնող D = 400մ պողպատե ջրատարի վրա: Արդյունքում տնտեսվել է Q = 10լ/վ ջրաքանակ:



Քյուղ Մյասնիկյան

● «Արմավիր» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Մյասնիկյան գյուղում գտնվող D=100մ պողպատե ջրագծի վրա: Արդյունքում տնտեսվել է Q=6լ/վ ջրաքանակ:




Քաղաք Երևան

● «Արաբկիր» տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Գյուլբենկյան 39ա շենքի հարևանությամբ անցնող $D=150$ մ թուջե ջրագծի վրա: Արդյունքում տնտեսվել է $Q = 8$ լ/վ ջրաքանակ:



● «Շենգավիթ» ՇՏ աշխատակիցների հետ համատեղ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Չեխով և Մայիսի 9 փողոցների խաչմերուկում անհայտ ուղղությամբ գնացող $D = 50$ մ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացվել է խցափակման եղանակով և արդյունքում տնտեսվել է $Q = 2$ լ/վ ջրաքանակ:

● «Հյուսիս» ՇՏ աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Ավան պահեստների գոտին սնող $D = 250$ մ ջրագծի վրա: Արդյունքում տնտեսվել է $Q = 4.5$ լ/վ ջրաքանակ:



● «Ջեյթուն» ՇՏ աշխատակիցների հետ համատեղ կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է վթար Ուլնեցի 3-րդ փակուղի 4-րդ շենքի հարևանությամբ անցնող $D = 100$ մ պողպատե ջրագծի վրա: Արդյունքում տնտեսվել է $Q = 4$ լ/վ ջրաքանակ:

● «Շահումյան» ՇՏ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Անդրանիկ 112 շենքի մոտով անցնող $D = 250$ մ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 12$ լ/վ ջրաքանակ:



2023թ. մարտ ամսին Գոտիավորման վարչության աշխատակիցների առաջարկով տեղադրված կամ փոխարինված ՃԿՓ-երի արդյունքում տնտեսվել է մոտ $Q = 30$ լ/վ ջրաքանակ:

3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.



- Քաղաք Մասիսի Արարատյան 3/4 քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով իրականացվել է հեղուկ քլորի տրման փասաված խողովակի վերանորոգում:



- Քաղաք Արթիկի Արթիկ քաղաքային քլորակայանում հեղուկ քլորի համակարգի հնամաշ քլորագծերը փոխարինվել են ամբողջովին նոր խողովակներով, որն ապահովել է հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը:



- Քաղաք Արմավիրի Լեռնագոգ քլորակայանում վերանորոգվել է փասաված դոզավորման պոմպը՝ հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



- Քաղաք Լոռիի Լոռի մաքրման կայանում հեղուկ քլոր համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով իրականացվել է հեղուկ քլորի համակարգի շարքից դուրս եկած դոզատորի փոխարինում նորով:





- Քաղաք Երևանի Ծարավաղբյուր քլորակայանում հեղուկ քլորի համակարգի բաժանարար հագույցի փասաված մանեկը փոխարինվել է նորով, որն էլ ապահովել է հեղուկ քլոր համակարգի անխափան աշխատանքը:



- Ճամբարակ քլորակայանում հեղուկ քլոր համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով իրականացվել է հեղուկ քլորի համակարգը սնուցող պոմպից դուրս եկող փասաված խողովակի վերանորոգում:

● Քաղաք Սպիտակի Չախկալ քլորակայանում վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի խցանված վակուում կարգավորիչը հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:




● Գյուղ Գառնիի Օզոնակայան քլորակայանում հեղուկ քլորի համակարգի տրման քլորաջրի վրա տեղադրվել է ֆիլտր, կատարվել են զուգահեռ նաև բաժանարար հանգույցի ամրացման աշխատանքներ, ապահովվելով հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը:

3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

● Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 41049 զանգ:

● Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 10904 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 8371 զանգ (76,8%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2533 զանգ (23,2%):

● Շահագործման վերաբերյալ ստացվել է 30145 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 23804 զանգ (79%), իսկ մարզերինը՝ 6341 զանգ (21%):



● 2022թ. մարտի համեմատ՝ 2023թ. մարտ ամսին 3,58 %-ով ավելացել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակը ավելացել է 50,28 %-ով:

● 2022թ. մարտի համեմատ՝ 2023թ. մարտ ամսին ամսին 65,39%-ով ավելացել են ջրամատակարարման բողոքները:



185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեկիր



	Ստորաբաժանում	2022 մարտ	2023 մարտ	
Առևտրային	Ընդամենը	10527	10904	3.58%
	Երևան	8539	8371	-1.97%
	Մարզեր	1988	2533	27.41%
Շահագործում	Շահագործում	20059	30145	50.28%
	Երևան	13910	23804	71.13%
	Արաբկիր	2304	4562	98.00%
	Քանաքեռ-Զեյթուն	1024	2094	104.49%
	Մաշտոց	2933	4879	66.35%
	Շահումյան	1797	2621	45.85%
	Շենգավիթ	1943	3214	65.41%
	Կենտրոն	2341	2727	16.49%
	Հյուսիս/Ավան Լոր Լորք/	774	1801	132.69%
	Էրեբունի	794	1906	140.05%
	այդ թվում կոյուղու վթար	58	130	124.14%
	այդ թվում դիտահորի խցանում	4040	5291	30.97%
	ՄԱՐԶԵՐ	6149	6341	3.12%
	Հարավ	2975	3210	7.90%
	Հյուսիս	3174	3131	-1.35%
	այդ թվում կոյուղու վթար	33	49	48.48%
այդ թվում դիտահորի խցանում	2413	2907	20.47%	
Ընդամենը	30586	41049	34.21%	

ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Հաշվետու ժամանակահատվածը Վեոլիա ջուր ընկերության գործունեության լուսաբանման առումով շատ արդյունավետ էր: Հանրային կապերի բաժինը /ՀԿԲ/ ապահովել է 32 հրապարակում այդ ընթացքում համակարգում բոլոր հնարավոր ուղղություններով տարվող աշխատանքների մասին: Դա վերաբերում է ինչպես աշխատանքների աշխարհագրությանը. Սպիտակ, Վարդենիս, Էջմիածին, Վեդի, Երևան, Գավառ, Չարենցավան և այլն, այնպես էլ թեմատիկային. փականների, ջրաչափերի ու հոսքաչափերի տեղադրում, կոյուղու խցանումների և ջրագծերի վթարների վերացում, նոր ջրագծերի կառուցում, պոմպակայանների նորոգում, ջրի արդյունավետ օգտագործում, համագործակցություն համայնքապետարանների հետ:

Վեոլիա Ջուր / Veolia Armenia
 24 հունվ 17:47
 Չմտադրարժան զբոսով Վեոլիա Ջուր ընկերության կայանքում #խոսք_կայանքից մե Բանի ու զբոսից #թրեյնինգի ժամը քառուս է «Այսօր» լրագրագետը:
 #ՎեոլիաՋուր #ՎեոլիաՀայաստան #Ջուր #ՎեոլիաՋուր #ԱնվտանգՉմտադրարժան
 #ՉմտադրարժանԲանի



ՀԿԲ-ի նախաձեռնությամբ հաղորդում հեռարձակեց Հանրային հեռուստատեսությունը: «Վեոլիա» շահագործման տեղամասի կոյուղու ինժեները և բանվորները լրագրողին ներկայացրին իրենց աշխատանքի ծավալը, կարևորությունը և առկա դժվարությունները: Մեզ հայտնի էր, որ կոյուղու նաև ջրամատակարարման համակարգի ջրաղբյուրների սանիտարական գոտիներում իրականացվող գարնանային սանմաքրման աշխատանքները: Ներկայացվել է, թե ինչպես է ընկերության Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայությունը դրանք սպասարկող

Այս ուղղություններով աշխատանքներ իրար կհանդիպեն նաև նախորդ ամիսներին են տարվել, սակայն մարտն այստեղ իր առանձնահատկություններն ունեցավ: Հաշվետու ամսին սկսվեց օրվա կարգավորիչ ջրամբարների /ՕԿՁ/ մաքրումը նստվածքներից, լվացումն ու խիտահանումը, որը շատ կարևոր է մատակարարվող ջրի որակի ապահովման տեսակետից: Ի տարբերություն նախորդ տարիներին այս նպատակով տարված աշխատանքների, ներկայում շատ մեծ ծավալի գործ է իրականացվում: ՀԿԲ-ն անդրադարձել է մասնավորապես Արարատյան, Կաթի կոմբինատ, Արին-Բերդի, Ծիծեռնակաբերդ, Դավթաշեն Վերին, Քանաքեռ Վերին, Փարաքարի ՕԿՁ-ների սանմաքրմանը: Մեզ հայտնի էր նաև անձրևատարների գարնանային մաքրումը, դրանց վերանորոգումն ու սպասարկումը, որի մասին

հաղորդում հեռարձակեց Հանրային հեռուստատեսությունը: «Վեոլիա» շահագործման տեղամասի կոյուղու ինժեները և բանվորները լրագրողին ներկայացրին իրենց աշխատանքի ծավալը, կարևորությունը և առկա դժվարությունները: Մեզ հայտնի էր, որ կոյուղու նաև ջրամատակարարման համակարգի ջրաղբյուրների սանիտարական գոտիներում իրականացվող գարնանային սանմաքրման աշխատանքները: Ներկայացվել է, թե ինչպես է ընկերության Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայությունը դրանք սպասարկող

անձնակազմերի ուժերով տարածքները մաքրում ձմռանը կուտակված տարատեսակ աղբից, ճյուղ-տերևներից, կայծակնահար ծառերից, արմատներից, էտվում են ծառերն ու թփերը:

Ընդ որում, բոլոր նշված հրապարակումները ուղեկցվել են տեսա կամ լուսանկարաշարով: Փորձելով հետաքրքրություն հաղորդել հրապարակումներին ու ցույց տալ ընկերության դինամիկ զարգացումը, ՀԿԲ-ն շարունակ փնտել և հանրությանն է ներկայացրել ամենօրյա աշխատանքում կիրառվող տեխնիկական նորությունները: Օրինակ լուսանկարաշարով ուղեկցված հրապարակման մեջ նշվել է, որ Սպիտակի սարերում գտնվող «Չախկալ» աղբյուրի ջրագծի վթարի վայրը ցուրտ եղանակային ու դժվարին լեռնային պայմաններում հայտնաբերվել է կվարտալիտների օգնությամբ: Ընդ որում, առաջին անգամ Վեոլիայի պրակտիկայում: Նոր փականների ու հոսքաչափերի մասին պատմելիս նշվել է, որ դրանք այսուհետ կառավարվելու են առցանց Կարգավարական բաժնից, ինչը շատ կարևոր է կայուն ջրամատակարարման ապահովման համար: Իսկ Շիրակի մարզի Սարազյուղի համար Վեոլիա-Թիմը կառուցել է նոր խորքային հոր ու ջրագիծ, որի շնորհիվ գյուղն առաջիկայում նորից սեփական ջուրը կունենա:

Մարտին ուշադրություն է դարձվել նաև պաշտոնական տեղեկատվությանը: Օրինակ Կանանց միջազգային օրվա առթիվ հրապարակվել է ընկերության շնորհավորանքը հանրությանը, հաջորդը մարտի 22-ին, Ջրի համաշխարհային օրվա առթիվ ոչ միայն ջրի կարևորության մասին հետաքրքիր թվեր ու փաստեր են հրապարակվել ընկերության ֆեյսբուքյան էջում, այլև պատրաստվել է 10 րոպե տևողությամբ հաղորդում ATV հեռուստատեսությունում, որի ընթացքում «Այսօր» լրատվականը պատմել է ջրամատակարարման ոլորտում Վեոլիա Ջուր ընկերության իրականացրած խոշոր ծրագրերից մի քանիսի ու ոլորտային բարեփոխումների մասին:

Տարբերությամբ մյուս հրապարակումների մեջ, վթարային ու պլանային ջրանջատումներից բացի, զգալի քանակ են կազմել ընկերության կարիքների համար պահանջվող ծառայությունների կամ ապրանքների մատակարարման համար մրցույթների մասին հաղորդագրությունները:



Ընդ որում հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, [facebook.com/veolia.armenia](https://www.facebook.com/veolia.armenia)-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. [Veolia.am](https://www.veolia.am) պաշտոնական կայքում, twitter.com/Veolia_ARM և [youtube Veolia Jur](https://www.youtube.com/channel/UC...) էջերում:



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*



5.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

● Վեոլիա Գրուպի կողմից ղեկավար անձնակազմի համար իրականացվող «Վեոլիա Հիմնարար Սկզբունքներ» հեռահար դասընթացի ներդրման համար իրականացվել են դասընթացի նյութերի հայերեն ադապտացման և ձևավորման աշխատանքներ:

● Հաշվի առնելով ինժեներատեխնիկական անձնակազմերի կողմից իրականացվող գործառնությունների բնույթը, դրանց կատարման ընթացքում ի հայտ եկող հնարավոր վտանգները և վերջինիս հետ կապված ռիսկերը, հիմք ընդունելով ՀՀ գործող ստանդարտների և Գրուպի ԲՌԿ Ստանդարտների պահանջները, բաժինը մշակել է աշխատողներին տրամադրվող անհատական պաշտպանության և կոլեկտիվ պաշտպանության միջոցների (ԱՊՄ-ներ) տեխնիկական մասնագրերը:

5.2. ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ/ՄԵՄԻՆԱԸՆԵՐ

● Հիմք ընդունելով Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտների պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման բաշխիչ ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում անվտանգության տեխնիկայի կանոնների ապահովման մակարդակի շարունակական բարձրացման, աշխատանքների կատարման նկատմամբ պատշաճ հսկողության սահմանման անհրաժեշտությունը, Ընկերության Երևան, Հյուսիս և Հարավ Շահագործման տնօրինությունների թվով 34 Շահագործման տեղամասի պետերի համար Բաժնի կողմից կազմակերպվեցին և իրականացվեցին ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած առկա դասընթացները և գիտելիքների ստուգումը:

▶ Վեոլիա Գրուպի «Փոստրակների և խրամուղիների մշակման աշխատանքներ» Բարձր Ռիսկերի Կառավարման ստանդարտի պահանջները,


▶ Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ բարձրության վրա» Բարձր Ռիսկերի Կառավարման ստանդարտի պահանջները,

▶ Վեոլիա Գրուպի «Անվտանգության պահանջները սարքավորումներ շահագործելիս» Բարձր Ռիսկերի Կառավարման ստանդարտի պահանջները,


▶ Շինհրապարակների անվտանգ կազմակերպման պահանջներ, ԱՊՄ-ների դերը և նշանակությունը



2022-2023թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումներին մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



2022-2023թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումներին ժամային համեմատական գրաֆիկ




5.3 ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● ՈԱԱ Բաժնի կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 39 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի

շահագործման ուղղությամբ, ինչպես նաև արձանագրված թերությունների վերաբերյալ կազմվեցին հաշվետվություններ և ներկայացվեցին Ընկերության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանուժների ղեկավարներին՝ արձանագրված թերությունների շտկման նպատակով:

2023 թ. իրականացված անվտանգության ստուգայցների քանակներն ըստ օբյեկտների



5.4 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՆԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

● Համաձայն Երևանի քաղաքապետի 29.12.2022 թվականի «Երևան քաղաքի արտակարգ իրավիճաներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի պլանի» սույն թվականի մարտի 1-ին Ընկերության «Երևան» շահագործման տնօրինության «Կենտրոն» շահագործման տեղամասի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնող մեկ խումբ՝ իրեն ամրակցված գործիքների լրակազմով և տեխնիկայով, ՈԱԱ բաժնի համակարգմամբ, մասնակցեց Երևանի պետական համալսարանում անցկացված «Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը հակառակորդի հարձակման դեպքում» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսուժնավարժությանը:



5.5 ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԿՈՒԵԿՏԻՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

● Հաշվետու ամսում բաժինը, հաշվի առնելով ինժեներատեխնիկական անձնակազմերի կողմից իրականացվող գործառնությունների բնույթը, դրանց կատարման ընթացքում ի հայտ եկող հնարավոր վտանգները և վերջինիս հետ կապված ռիսկերը, հաշվառեց ԱՊՄ-ների անհրաժեշտ քանակները, որոնց հիման վրա Ընկերությունը ձեռք կբերի պահանջվող քանակությամբ ԱՊՄ-ներ (Ամառային բանվորական արտահագուստ, պաշտպանիչ կոշիկ, սաղավարտ, անվտանգության լուսասանդրադարձնող ժիլետ, անվտանգության գոտի-պարան, հակագագ և այլն):



«ՎԵՈՒԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am